թեան զօսացաւ։ Ճշմարիտ է այս, չգիտեմ։ Բայց, յայտնի է, որ Մարկոս Անտոնիոս՝ այդ սրբապղծութեան բուն հեղինակը արժանապէս տուժեց այդ ոճիրը։ Տասնեակ հազարաւոր տաճար ու յիշատակարաններ աւերող ու սրբապղծող թուրքը եւ միլիոններով անձեռագործ մարդկային տաճարներ ոչնչացնող այս բթամիտ ու վայրագ ցեղը մի՞թէ անպատիժ պիտի մնայ... Չգիտեմ։ Անդորայից գործակալներ են հասած Հռոմ, սրա նոր ողջոյնի արժէքը հասկնալու...

Ու կարդում եմ վերստին.—

Armenis ... devictis ... — «Հայերը պարտուած»։ Կարդում եմ, եւ իմ մեծ նախնեաց այս պարտութիւնից բնաւ չեմ կարմրում, վասնզի մեր առջեւ Հռոմն էր, որ երբեք չէր յաղթուել։ Եւ յետոյ այս ճախողանքի մէջ մենք բախտակից ունինք ահեղազօր պարթեւներին ու յաւէտ կատաղի գերմանացիներին։

Եւ ինչո՞ւ միայն սրանք. բրիտանական կղզիներից եւ Սպանիայից մինչեւ Պարսկաստան, Միջագետք եւ Արաբիա եւ Միջերկրականի շուրջը թառող բոլոր ազգերից ո՞րը դիմացաւ Հռոմի զօրութեան։ Ո՞րը իր մէջքը չծռեց նրա լեգէոնների եւ օրէնքի առջեւ։ Այսօրուայ նոյնիսկ մեծ ազգերից ո՞րը չի ճաչակել Հռոմի տիրապետութեան խստութիւնը։ Սրանք ամէնքը անխտիր, ամէնքն իրենց հերթին դարեր շարունակ Կեսարների երիվարների ոտների փոշին շնչեցին եւ նրանց սմբակների ծանրութիւնը զգացին իրենց թիկունքին։ Եւ քանի՛ քանիսն իրենց իշխաններից via Sacra-ով շղթայակապ անցան յաղթական զօրավարների թափօրին շուք տուին ու գնացին կապիտոլեան Զեւսին տաճարում զոհուելու։ Հազարներով գալլեր, գերմաններ, բրիտանացիք՝ դարերի ընթացքին Հռոմի կրկէսներում՝ բարբարոսներին համահաւասար ծառայեցին ամբոխը զուարճացնելու։ Քիչ անգին մենք կը տեսնենք որ նոյն օրերում «թուով յոյժ ածու» Հայաստանը իր հայրենի սրբազան Արաքս գետի պէս միշտ էլ «կամրջընկէց» մնաց, անգամ Հռոմի խորտակիչ, տիեզերական զօրութեան յանդիման։

Բ.

ԿԱՆԽԱԺԱՄ ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Արդարեւ Հայաստանը հեշտութեամբ չծռեց իր գլուխը Հռոմի առջեւ։ Այս «գերագոյն պատերազմը» ամենից աւելի պատշաճ էր Հայաստանի յանդուգն ու յամառ դիմադրութեանը։ Հակառակ այն միանգամայն բացառիկ եւ անհաւասար պայմաններին, որոնց մէջ կատարուեց այդ բախումը՝ հէնց սկիզբից ի վեր։

Հռոմը դէպի Մերձաւոր Արեւելք ու Հայաստան շարժուեց իր պետական, ռազմական ու քաղաքական զարգացման լիակատար հասունութեան շրջանին, երբ այսօրուայ գրեթէ ողջ քաղաքակիրթ Արեւմուտքը, ինչպէս ասացինք, վաղուց հետէ կորացել էր նրա սրի եւ օրէնքի տակ։ Նա հազար տարուայ ռազմական փառք ու փորձ ունէր։ Հելլադայի զինուորական եւ քաղաքական օրինակելի մեթոդները իւրացրել եւ սքանչելիօրէն կիրառել գիտէր։ Այդ օրերի զինուորական արուեստի վերջին խօսքը գիտէր եւ իր բանակը — թիկուղ վարձկան — սիրում էր իր պատերազմի գործը, ուր փառքից աւելի՝ շահ ու թալանի, հեշտ հարստանալու յոյսը՝ շատ յաճախ էր արդարանում։

Այսպիսով Ա. դարում (Ն.Թ.) Հռոմի թիկունքը շատ հանգիստ էր դէպի Արեւելք արշաւանքի համար, քանի որ Արեւմուտքը բաղմաթիւ ցնցումներից յետոյ արդէն հանդարտուել էր։ Եւ Արեւելքի բանակի հրամանատարութեան շուրջը, ամէն անգամ ահագին պայքար կար միշտ՝ յայտնի զօրավարների մէջ։

Այսպէս, Լուկուլլոս, Պոմպէոս, Կրասոս, Մարկոս Անտոնիոս՝ իւրաքանչիւրն իր հերթին ստիպուած էին Հռոմում մեծ խոչընդոտների յաղթել, շատ մեքենայութիւնների դիմել, դաւերից անցնել Արեւելքի բանակի հրամանատարութիւնը ձեռք ձգելու համար։ Յաղթանակն այնտեղ թւում էր հեշտ ու փառքն ապահով։ Եւ յետոյ, ողջ Փոքր Ասիան՝ իր հարստութեամբ ու ճոխութեամբ աւետեաց երկրի պէս գրաւիչ էր։ Արդէն Հռոմի բոլոր արշաւանքների մէջ առաջնակարգ տեղ էր բռնում ոսկու